

է, իր ոյժերն էլ նուիրում ազգի առաջադիմութեան զարգացման գործին:

Հայ վարժուհին այսօր լայն ասպարէզ է գրաւել իր համար, իսկ հայ կին-խմբագիրը, կին-հրատարակչուհի ու կին-գրողն այլ և հազուադէպ նորութիւններ չեն մեր կեանքում:

Գիտութեան պաշարով զինված, այսօր հայ կինը աշխատում է հասարակական գործունէութեան ասպարէզը մտնել և պատուաւոր տեղ գրաւել իր համար. և չը նայած որ ամեն քայլափոխում շարունակ նորանոր խոչընդոտներ են կանգնեցնում նրա առջ, սակայն եռանդուն թափով, որքի տակ տարով ամեն տեսակ արգելքներ ու խոչընդոտներ հայ կինը յաղթական քայլով առաջ է գնում՝ ձեռքին բարձր բռնած գիտութեան լուսաւոր շահը:

Սրտի անհուն բերկրութեամբ մենք այսօր ակնատես ենք այն բանին, որ հայ կինը, չը բաւականանալով իր տարած կուրտուրական մի շարք յաղթութիւններով, այսօր էլ աշխատում է առանձին, իբրև մի կարճ մակերայլած ոյժ, մի կորպորացիա՝ մասնակցել մեր ազգային առաջդիմութեան մեծագոյն աստիճանի մէջին՝ «Մշակի» յօրեկեանին:

Եւ ամեն մի մարդ, որ կողմնակից է կանանց ազատագրութեան հարցին, ամեն մի մարդ, որ ձգտում է կնոջ մէջ տեսնելու «մարդու», պէտք է հրճուանքով ողջունէ հայ կնոջ այդ ցանկութիւնը:

Հայ կինն էլ խօսեց:
Դարերով կաշկանդված նրա լեզուն, որ ամուր քիթկանքի տակից չէր համարձակում ձայն-ծագուուն հանել, այսօր արձակել է իր կայերը և ազատ համարձակ խօսում, դրուատում է այն օրգանի գործունէութիւնը, որը կանանց ազատագրութեան ամենաջերմ կողմնակիցներից մէկն է եղել:

Եւ «Մշակի» յօրեկեանական փառաւոր հանդէսին, երբ մենք մեր կողքին նստած կը տեսնենք հանդէսին մասնակցող մեր քոյրերին ու մայրերին, երբ նրանց յաղթական ճառերը կը լսենք ամբողջից, մեր սիրտը պէտք է ցնծութեամբ լցվի, որ հայ կինն էլ այսօր հասարակական գործունէութեան ասպարէզն է մտել, որ հայ կինը թողնելով իրան վիճակված խոհանոցը՝ այսօր ազատ, համարձակ, մեզ հետ միասին, մեզ հետ ձեռք-ձեռքի տուած դէպի լուսաւոր ասպարէզ է դիմում:

Եւ է՛հնց այդ օրը մենք բարձրաձայն կը գոչենք՝

«Ճանապարհ տուէք, հայ կինն է գալիս»:
Վ. Թումանեան

Մի ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Գանի որ հայկական տպագրութեան 400-ամեակը արժանաւոր կերպով ատնելու հարցը ասպարէզի վրա է, յոյս ունեմ որ «Մշակի» խմբագրութիւնը թոյլ կը տայ նաև ինձ մի քանի խօսք ասել այդ հարցի մասին:

Ինչպէս յայտնի է, առաջին հայ տպագրիչներն իրանց պարտականութիւնն էին համարել նաև և առաջ տպագրել կրօնական բովանդակութիւն ունեցող գրքեր, մասնաւոր առբ գրքեր: Այդպիսով նրանք կամեցել էին ժողովրդի համար մատչելի դարձնել այն գրքերը, որ մինչ այդ միայն եկեղեցիների և վանքերի մէջ կարելի էր գտնել և միայն հազուադէպ դէպքերում առանձին անհատների մօտ: Այդ ժամանակ գտնված ձեռագիր Աստուածաշունչների և Աւետարանների թէ՛ գինը և թէ՛ լեզուն մատչելի չէին հասարակ ժողովրդի համար: Տպագրութեան միջոցով 400 տարի սրանից առաջ աշխատեցին այդ դժուարութիւններից գոնէ մէկը վերացնել:

Դրանից յետոյ անցան հարիւրաւոր տարիներ, այդ գրքերը կրկին և կրկին տպագրվեցին աշխարհի զանազան կողմերում, սակայն դրանց ժողովրդի մէջ տարածվելու երկրորդ մեծ խոչընդոտը—լեզուի անմատչելիութիւնը—չը վերացաւ մինչև այսօր: Մինչև այսօր էլ հայ-լուսաւորչական ժողովրդի համար՝ հայ-լուսաւորչական եւ կեղեցու պետերը հարկաւոր չեն համարել աշխարհաբար լեզուով Աստուածաշունչ կամ Աւետարան հրատարակել ձեռք է, այդ գրքերը կան հիմա թէ՛ թիւրքաշայերի և թէ՛ ռուսաշայերի զբաղան լեզուներով հրատարակված, բայց որովհետև այդ թարգմանութիւնները և տպագրութիւնները չեն վաւերացված որևէ կաթողիկոսի կամ պատրիարքի կողմից, մասնաւոր որ երկն են մարդիկ, որոնք զանազան պատճառներից զրոյված աշխատել են ժողովրդին համոզել, որ այդ աշխարհաբար թարգմանութիւնները հարազատ չեն և այն, ուստի ժողովուրդը շատ անգամ չը գիտէ ինչ անել:

Սուրբ գիրք ունենալու պահանջը կայ, բայց պահանջին բաւարարութիւն տալու համար շատ դժուարութիւններ կան, ինչպէս՝ օրինակ՝ էջմիածնից վաւերացված աշխարհաբար թարգմանութեան բացակայութիւն, գրաբարի անհասկանալի լինելը և այլն:

Ինչ անել
Մի քանի տարի առաջ էջմիածնում սկսեցին գրաբար Աստուածաշունչը նորից տպագրել: Եթէ չես սխալվում, յաւելակէս այդ նպատակի համար հայ հարուստներից մէկը բաւական մեծ քանակութեամբ թուղթ էր ուղարկել էջմիածին Այդ տպագրու-

թեան առաջին մէկ-երկու թերթերը ես տեսել եմ:

Բայց գործը կիսատ մնաց, և հայ ժողովուրդը նորից զրկվեց գոնէ գրաբար Ս. Գիրք ունենալու յոյսից:

Այդ պատճառով մենք կը կամենայինք հետեւել հայ տպագրութիւնն անի:

Թող հայ տպագրութեան 400-ամեայ յօրեկեանը տօնվի ի լոյս ընծայելով այն գիրքը, որով սկսվել է այդ տպագրութիւնը. թող էջմիածինը տպագրէ և էժան գնով ժողովրդի մէջ տարածէ աշխարհաբար Աստուածաշունչը կամ գոնէ Նոր-Կտակարանը՝ վրան գնելով այս նկատողութիւնը. Տպագրված ի յիշատակ հայկական տպագրութեան 400-ամեակի:

Այդ նպատակով կարելի է գործածել եղած աշխարհաբար թարգմանութիւններից մէկը կամ ձեռնարկի ինքնուրոյն թարգմանութեան: Այդ տեսակ մի գործ կատարելու համար անհրաժեշտ պատրաստութիւն ունեցողներ էջմիածնում շատ կան: Եւ մենք վստահ ենք, որ եթէ էջմիածինը վճռէ Սուրբ Գիրքը տպագրել աշխարհաբար լեզուով, ծախքը հոգացողներ կը գտնվեն Մ. Գիրձակեան:

ՄԻ ԼՐԱՑՈՒՄ

Կ. Հ. Գիւղանտ. և Տնայնագործ. Ընկերութեան ընդհանուր ժողովում (ամսիս 7-ին) հետաքրքրական էր Յ. Փիրալեանի դեկլարումը, ուր կօսվեցաւ յայտնի մասին կային շատ խրատական տեղեկութիւններ, ի միջի այլոց և հայերի ու վրացիների միջև եղած վերջինիս զարգացման աստիճանի: Փիրալեանը՝ հեղինակաւոր մասնագէտ կօսվեցաւ յայտնի յայտնեց հետեւեալը.

«Դեռ 1901 թ. վրաց պնուակնութիւնը իրաւունք ստացաւ ունենալու հողային կօմիտիս, որը տառնալով աղուականների բանկից հարկաւոր գումար՝ օգնում է գիւղացիներին զլիւստրապէս հող ձեռք բերելու կօսվեցաւ յայտնի կերպով. դա, ի հարկէ, շատ օգնեց գործին: Բայց զլիւստր պատճառն այն է, որ վրաց գիւղական ազգաբնակչութիւնն անհամեմատ աւելի զբաղէ և և զարգացած հարուստ գիւղական մեծ ինտելիգենցիայով, որը կարողանում է կօսվեցաւ և սրա նման կուլտուրական գործեր ստեղծել և նրանց յարատւութեան աջակցել: Ես եղել եմ Ղարաբաղ և ուրիշ հայաբնակ գաւառներում, և զժաղդաբար պիտի ասեմ, որ հայ գիւղական ազգաբնակչութիւնը շատ յետ է մնացել՝ համեմատած վրացիների հետ. տասնեակ գիւղերում, Ղարաբաղում, դուք ոչ մի հայ լրագիր չէք գտնի. իսկ վրացիների ամեն մի գիւղում կը զբոսնէ մի քանի վրացերէն լրագիրներ: Մենք մեր հոգևոր ծխական ուսումնարաններով չենք կարողանում օգտվել յօգուտ զբաղուտութեան տարածման այնպէս, ինչպէս վրացիք կարողանում են օգտվել իրանց ոչ ազգային-հոգևոր զարգացումով: Եւ հայերիս մէջ նուազ զարգացման կօսվեցաւ յայտնի պատճառը խորին տգիտութիւնն է և գիւղական ինտելիգենցիայի բացակայութիւնը»:

Ահա հեղինակաւոր մասնագէտ Փիրալեանի կարծիքը, որը պիտի տպված լինէր լրագրի մէջ, ինչպէս յիշված էր «Մ. Ա.»-ի № 106-ում, որպէս զի սպարդ լինէր ամենիս համար այն իմաստուն և աւածը անգլիացոց, որը ասում է՝ «Ոչ օրէնք, այլ մարդիկ» յասել է թէ՛՝ ոչ մի օրէնք չէ կարող աշոգութիւն ունենալ, եթէ նրան գործադրող մարդիկ չը լինեն: Ուրեմն հարկաւոր է մեր գիւղացիութեան մէջ հող պատրաստել այն ճանապարհով, ինչ ճանապարհով գնացել են մեր վրացի վրացիք՝ տարածելով զբաղուտութեան ուսում և պատրաստելով գիւղական հարուստ ինտելիգենցիա: Այս գաղափարը յայտնեցին բժ. Աղասարեանը, Սօլովեանը, Մկրտումեանը, և Փիրալեանը իր վերջին խօսքում յայտնեց վերոյիշեալ կարծիքը:

Ոչ ոք կօսվեցաւ յայտնի դէմ չէ, բայց պիտի խոստովանեն, որ այդ ինքնօգնութեան գաղափարը մեր հայ գիւղացիութեան մէջ չէ զարգացած, և իսկապէս չը պիտի երազների մէջ ընկնել նրա փրկութիւնը տեսնելով կօսվեցաւ յայտնի մէջ. նախ պիտի հող պատրաստենք նրա մէջ, որը անում են մեր բարեգործները, Բարեգործական, Կուլտուրական և Հրատարակչական Ընկերութիւնները մեծ աշոգութեամբ, աշխատելով, ըստ չափու կարողութեան, տարածել ուսում, որից շատ է դուրկ մեր գիւղացիութիւնը: Ուր կարելի է և պատրաստ է ժողովուրդը՝ բացէք կօսվեցաւ յայտնի, ուր չը կայ այդ պատրաստութիւնը՝ պատրաստեցէք մեր զբաղի վրացիները պէս զբաղիտութիւն և ուսում տարածելով նրա մէջ լայն ծաւալով: Այս է ուղիղ և պատմականօրէն փորձված ճանապարհը: Պիտի աւելցնել և այն, որ Երևանեան նահանգի ու այլ տեղերի մանր կրեդիտային վարկի աշոգութիւնը, ըստ պ. Փիրալեանի, բացառվում է նրանով, որ կայ հսկողութիւն ինքնաութեան կողմից, այլապէս անպատրաստ համայնական գործակցութիւն ժողովրդի մէջ չէ կարող առաջդիմել:

Շատ ցանկալի է, որ պ. Փիրալեանը, որը համարվում է հեղինակաւոր մասնագէտ կօսվեցաւ յայտնի հարցում և որը մասնաւոր լու ծանօթ է նրա ծագման ու զարգացման աստիճանի հետ թէ՛ վրացիների և թէ՛ հայերի մէջ, տպել «Մշակի» մէջ մի ամփոփ յօդուած:
Բժ. Բ. Աղասարեան